ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/103

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Վիշկա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթ, եգոզայի, փշալարերի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5269-2020 գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 07.04.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1155-2020 գրության հիման վրա, 09.04.2020թ.-ին «Վիշկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 09.04.2020թ.-ին:

10.04.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/103 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.05.2020թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 07.04.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1155-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «Վիշկա» ՍՊ և «ԵՎՐՈՊԱ» ՍՊ ընկերությունները (այսուհետ՝ Մասնակիցներ): Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 24.03.2020թ., և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետի և 2-րդ մասի 2.5 կետի համաձայն՝ «Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ.»: Մասնակիցները հայտով էլեկտրոնային գնումների armeps.am համակարգով որպես հայտի ապահովում ներկայացրել են բանկային երաշխիքների արտատպված (սկանավորված) տարբերակները, սակայն մինչև 25.03.2020թ. Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չեն ներկայացրել

իրենց կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովումների բնօրինակները, ուստի 01.04.2020թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է Մասնակիցների հայտերը:»:

Կից ներկայացվել է Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով::

3. <u>«Վիշկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.04.2020թ.-ին գրությամբ դիմել է «Վիշկա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5269-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, 15.04.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Վիշկա» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշման հետ համաձայն չենք:

04.05.2017 N526-Ն որոշմամբ հասաաված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը ասում է «Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման այպանքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը»:

Ենթադրվում է, որ «Վիշկա» ՍՊԸ-ին անհամապատասխանության շտկման մասին ծանուցում չի ուղարկվել՝ հաշվի առնելով վերը նշված կետի հետևյալ հատվածը. «բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի

ապւսհովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Սակայն գնահատող հանձանժողովի 08.04.2020թ. կայացրած որոշման համաձայն գնման ընթացակարգի մասնակցի ներկայացրած հայտի մասով ներկայացված է անհամապատասխանության առկայություն, մասնավորպես՝

«Սույն երաշխիքը հանդիսանում է ՀՀ ՊՆ և «մասնակցի անվանումը» միջև կնքվելիք ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3 հայտի ապահովման կատարման ապահովում», այնինչ պետք է նշված լիներ՝ «նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների կատարման ապահովում»:

Մասնակցի կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման 6-րդ կետի համաձայն՝ «Բենեֆիցարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝ 1. ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված ներկայացվում են հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և երաշխիքը:

Ելնելով վերոգրյալից՝

Վերը նշված մասնակցի հայտը նույնպես պետք է մերժված լիներ գնահատող հանձանժողովի կողմից, քանի որ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան: Քանի որ մասնակցի հայտը չի մերժվել, նշանակում է, որ «Վիշկա» ՍՊԸ-ն նույնպես պետք է ստանար անհամապատասխանության շտկման ծանուցում:

Այս պարագայում «Վիշկա» ՍՊԸ-ին անհամապատասխանության շտկման մասին ծանուցում չուղարկելը առաջացրել է կողմակալ վերաբերմունք և օրենքի կոպիտ խախտում:

«Վիշկա» ՍՊԸ-ի հայտի մերժման հիմք նշված է 04.05.2017 N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 42-րդ կետը: Սակայն այս հիմքով «Վիշկա» ՍՊԸ-ի հայտը մերժելը նույնպես օրենքի խախտում է, քանի որ ՀՀ ՊՆ չի ապահովել վերը նշված որոշման 41-րդ կետը: Ինչը «Վիշկա» ՍՊԸ-ից անկախ պայմաններում առաջացրել է անհամապատասխանության շտկման անհնարինություն:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի երկու նիստերից և ոչ մեկի արձանագրությունների վերաբերյալ «Վիշկա» ՍՊԸ-ն ARMEPS համակարգի միջոցով ծանուցում չի ստացել, սակայն մրցույթ հայտարարողը պարտավոր է դրանք ուղարկել «ոչ ավտոմատ» ծանուցման միջոցով:

Ինչ վերաբերում է բանկային երաշխիքը փաստաթղթային տարբերակը չներկայացնելուն, տեղեկացնում եմ, որ դա կապված է եղել բացառապես կարանտինային իրադրության և երկրում հայտարարված արտակարգ դրության հետ և բխում է առողջապահական նորմերի պահպանման անհրաժեշտությունից:

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ կողմից հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2 ծածկագրով գնման ընթացակարգով նախատեսված է եղել ձեռք բերել եգոզա տեսակի անվտանգության արգելապատնեշ, որի համար որպես տեխնիկական բնութագրիչ բաղադրիչ է ներկայացված եղել ГОСТ 7372-79, որը իրենց ենթադրում է, որ առաջարկվող ապրանքը պետք է լինի ռուսական արտադրության: Սակայն գնահատող հանձնաժողովի 01.04.2020թ. որոշմամբ ընտրված մասնակիցը տվյալ չափաբաժնի համար առաջարկել է մատակարարել չինական արտադրության անվտանգության արգելապատնեշ, որը չի կարող համապատասխանել ՀՀ ՊՆ կողմից ներկայացված ГОСТ 7372-79-ին: Խնդրում եմ պարզաբանել տվայլ փաստը անտեսելու և հաղթող մասնակից ընտրելու համապատասխանությունը ՀՀ գնումների մասին օրենքին և հայտարարված հրավերի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովի 01.042020թ. նիստի արձանագրության մեջ 1-ին և 2-րդ չափաբաժինների անվանումները նույնն են, մասնավորապես նշված է անվտանգության արգելապատնեշներ /Եգոզա/: Այս փաստը նույնպես անհամապատասխանություն է հայտարարված մրցույթին:

Ինչպես նաև վերը նշված ընթացակարգի վերաբերյալ ծանուցումներ չեն կատարվել «Վիշկա» ՍՊԸ-ին Armeps համակարգի միջոցով, ինչը մրցույթ հայտարայաղի ուղղակի պարտավորությունն է:»:

Մասնակիցը 22.04.2020թ.-ին ներկայացված գրությամբ հավելել է նաև հետևյալը.

«09.04.2020թ. թիվ 26/26-1/5269-2020 գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հետ համաձայն չենք:

«Վիշկա» ՍՊԸ-ն առաջնորդվել է ՀՀ քաղաքցիական օրեսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետով, մասնավորապես. «Ձեռնարկատիրական գործութեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ

պայմանագրով: Նման հանգամանքներ չեն , մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից , շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանիմոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:» Այլ կերպ ասած ՀՀ հայտարարված արտակարգ դրության պայմանները առաջացրել է թյուրիմացություն, այդ իսկ պատճառով խնդրում եմ կասեցնել վերը նշված ընթացակարգը, ինչպես նաև թույլ չտալ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Ինեկոբանկ» ՓԲԸ-ին ուղարկվախ 14.02.2020թ. թիվ ԴՎԱ/1455 գրության հիման վրա 26500000 (քսանվեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը հանձապետական հաշվին փոխանցելը:»

Մասնակիցը 04.05.2020թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վիշկա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«Վիշկա» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պատպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթին:

«Վիշկա» ՍՊԸ-ի կողմից armeps.am համակարգի միջոցով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթին ներկայացված հայտի փաթեթում կցվել է նաև հայտի ապահովման սկանավորված տարբերակը:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.03.2020թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.3 կետի համաձայն նշվել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթի հայտերի վերջնաժամկետ է սահմանվել 24.03.2020թ., և «Վիշկա» ՍՊԸ-ն մինչև 25.03.2020թ. ժամը 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի 01.04.2020թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 42-րդ կետը, որոշել է մերժել «Վիշկա» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7.1 կետի՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 2-ի 2.5 կետի՝ հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3): Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ

բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Հայտնում ենք, որ «Վիշկա» ՍՊԸ-ն սահմանված կարգով armeps.am համակարգի միջոցով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթին ներկայացված հայտի փաթեթում կցել է նաև հայտի ապահովման սկանավորված տարբերակը:

Ավելին, եթե «Վիշկա» ՍՊԸ-ն հայտի փաթեթում կցել է հայտի ապահովման սկանավորված տարբերակը՝ ուղղակի հետևում է նաև, որ ՍՊԸ-ն ունի նաև հայտի ապահովման բնօրինակը ու եթե Պատվիրատուն գտնում է, որ մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը, ապա գնահատող հանձնաժողովը ինչու «Վիշկա» ՍՊԸ-ին չի տրամադրել շտկելու հնարավորություն, այլ փոխարենը հայտերը ներկայացնելուց վերջնաժամկետից հետո մոտ միայն 1 ամիս անց /24.03.2020թ./ որոշել է մերժել ՍՊ-ի հայտը՝ դեռ ավելին, համապատասխան հիմքերը ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Վիշկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Համաձայն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2 մայիսի 2019 թվականի N 516-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝

«47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝

առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:».

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

Ընթացակարգի հրավերի 8.10 կետի համաձայն, եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Գտնում ենք, որ նման ոչ իրավաչափ եղանակով Ընկերության հայտը մերժելը նաև ոչ իրավաչափորեն հանգեցեցրել է՝ «Վիշկա» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք դիտարկել նաև մի շատ կարևոր հանգամանք. արդյոք ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում հայտի ապահովման բնօրինակը չներկայացնելը կարող է որակվել որպես գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում և արդյոք այդ գործողությունը հիմք է՝ մասնակցին Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու համար:

Որպեսզի մասնակցին վերագրվի գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, անհրաժեշտ է, որպեսզի մասնակիցը ստանձնած լինի նման պարտավորություն կամ առնվազն այդպիսին որակվի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման

չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Այսպիսով, Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը հստակ և սպառիչ սահմանում է այն բոլոր դեպքերը, երբ մասնակցի կողմից դրսևորած վարքագիծը կարող է դիտարկվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, դրանք են.

հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող.

որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող.

առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Որպեսզի՝ «Վիշկա» ՍՊԸ-ին վերագրվեր գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, անհրաժեշտ էր, որպեսզի առկա լիներ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով նախատեսված որևիցե հիմքերից մեկը:

Փորձենք դիտարկել այդ հիմքերը առանձին-առանձին, բացահայտելով, արդյոք ՝ «Վիշկա» ՍՊԸ-ի կողմից այդ հիմքերից որևիցե մեկը խախտվել է, թե՝ ոչ:

Հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում առկա չի եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով և Ընթացակարգի հրավերով ամրագրված՝ «Վիշկա» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի սահմանափակման որևիցե մի հիմքը, ուստի և գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը չի կարող որակվել որպես իրականությանը չհամապատասխանող և այս հիմքով ՝ «Վիշկա»

ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

2. Որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում որակավորման չափանիշների պահանջներին մասին հայտով՝ «Վիշկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը չի կարող որակվել որպես իրականությանը չհամապատասխանող և այս հիմքով ՝ «Վիշկա» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ներկայացված փաստերից և գնահատող հանձնաժողովի արձանագրություններից ակնհայտ է դառնում, որ ՝ «Վիշկա» ՍՊԸ-ն չի ճանաչվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից, ուստի և այս հիմքով ՝ «Վիշկա» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ի մի բերելով վերոհիշյալը՝ կարելի է փաստել, որ տվյալ դեպքում առկա չի եղել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ ինչպես երևում է վերոշարադրված վերլուծությունից՝ հայտի ապահովման բնօրինակը սահմանված ժամկետում չներկայացնելը, ՍՊԸ-ի կարծիքով, չի կարող դիտարկվել որպես Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման թվարկված որևիցե հիմքերից մեկը:

Խնդրում ենք նկատի ունենալ նաև, որ ս.թ. ապրիլի 30-ին «Վիշկա» ՍՊԸ-ի կողմից հայց է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին, որով հայցի ապահովմամբ միջնորդել են ենք՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին՝ նախաձեռնած ՍՑ-ԼՕ-2020/103 ընթացակարգով կատարելու որևէ գործողություն՝ հայցվորին՝ «Վիշկա» ՍՊԸ-ին «Գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում ներառելու նպատակով՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ուստի, եթե բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին ներկայացված սույն դիրքորոշմամբ բերված փաստարկները բավարար չլինեն «Վիշկա» ՍՊԸ-ին "Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում" չներառելու համար, ապա խնդրում ենք թիվ ՍՑ-ԼՕ-2020/103 ընթացակարգի շրջանակներում որոշման հրապարակման նիստը նշանակել հնարավորինս ուշ, որպեսզի հնարավոր լինի ունենալ նաև դատական հայցին կից ներկայացված հայցի ապահովման վերաբերյալ դատարանի որոշումը:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Վիշկա» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-ԼՕ-2020/103 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից եգոզայի, փշալարերի ձեռքբերման նպատակով 11.02.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 24.03.2020թ.-ի ժամը 10:00 ներառյալ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վիշկա» ՍՊԸ-ն:

«Վիշկա» ՍՊԸ-ն թիվ 3 հավելվածով՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.03.2020թ.-ին տրամադրված թիվ 633 բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ նաև՝ Երաշխիք):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.03.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Վիշկա» ՍՊԸ-ն մինչև 25.03.2020թ.-ը ժամը 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի գնահատող հանձնաժողովը 01.04.2020թ.-ին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, որոշել է մերժել «Վիշկա» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթի հայտերի վերջնաժամկետ է սահմանված եղել 24.03.2020թ.-ը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5269-2020 գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում

են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից եգոզայի, փշալարերի ձեռքբերման նպատակով 11.02.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանված եղել 24.03.2020թ.-ի ժամը 10:00 ներառյալ, որին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Վիշկա» ՍՊԸ-ն թիվ 3 հավելվածով՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող

հանձնաժողովին է ներկայացրել «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.03.2020թ.-ին տրամադրված թիվ 633 բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ նաև՝ Երաշխիք):

Հանձնաժողովի 24.03.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Վիշկա» ՍՊԸ-ն մինչև 25.03.2020թ.-ը ժամը 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի գնահատող հանձնաժողովը 01.04.2020թ.-ին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, որոշել է մերժել «Վիշկա» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով բաց մրցույթի հայտերի վերջնաժամկետ է սահմանված եղել 24.03.2020թ.-ը:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային առաջարկի, ընդ որում՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման, ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից «Վիշկա» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է և չի բխում Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջներից, քանի որ Երաշխիքի բնօրինակ տարբերակը Կարգով սահմանված ժամկետում չներկայացնելու պարագայում Հանձնաժողովը պետք է մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը և դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեր վերջինիս՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետը:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ բանկային երաշխիքի փաստաթղթային տարբերակը չներկայացնելը կապված է եղել Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության հետ, և որ այն բխել է առողջապահական նորմերի պահպանման անհրաժեշտությունից, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար

պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով:

Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից 25.03.2020թ.-ին բանկային երաշխիքի բնօրինակ տարբերակը գնահատող հանձնաժողովին հանձնելն եղել է անհնարին՝ պայմանավորված ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հետ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5269-2020գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/103 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**